ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՔ

ԿՆՅԱԶ ՍԱՐՈՅԱՆ

Արդի ժողովրդավարական ընթացակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհի տարբեր երկրներում հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման լավագույն մոդել համարվող ազատական-ժողովրդավարական կառավարման ձևը դժվարին ժամանակներ է ապրում: Առաջին հերթին խոսքը կառավարման այս ձևի ընթացակարգերի և մասնավորապես ներկայացուցչականության ինստիտուտի մասին է:

Փորձագիտական շրջանակները, հասարակական կարծիքի ուսումնասիրմամբ զբաղվող վերլուծական կենտրոնները բարձրաձայնում են այն մասին, որ թե՛ համախմբված ժողովրդավարություններում և թե՛ կայացման փուլում գտնվող երկրներում ընտրությունների հանդեպ հանրային հետաքրքրությունը մարում է, ընտրված գործիչներն ընտրությունների ավարտից հետո օտարվում են իրենց ընտրողներից, նախընտրական ծրագրերում և քաղաքական նախագծերում կայուն դերակատարում է վերապահվում ամբողջահաճության քաղաքական խոսույթին, ընտրազանգվածին տված խոստումները մոռանում են, կուսակցությունները գաղափարական լուրջ ճգնաժամ են ապրում: Որպես այդ ամենի արդյունք՝ ընտրողները կա՛մ դադարում են իրենց նույնականացնել որևէ կուսակցության հետ, կա՛մ դա անում են մեծ դժկամությամբ՝ առաջնորդվելով այժմեական քաղաքական իրավիճակով, ինչն էլ իր հերթին քաղաքական ուժերին հնարավորություն է տալիս խուսափելու քաղաքական պատասխանատվությունից: Մյուս կողմից՝ ժողովրդավարական ընթացակարգերից դժգոհ քաղաքացիներն իրավիճակին արձագանքում են կա՛մ քաղաքացիական համախմբմամբ՝ ընդդեմ քաղաքականություն վարողների, որոնք ոչ միշտ են կարողանում համարժեքորեն արձագանքել «ներքևների» պահանջներին, կա՛մ էլ օտարվում են քաղաքական ինստիտուտներից՝ ցուցաբերելով վստահության նկատելի ցածր մակարդակ: Ժողովրդավարության ավելի վաղ, այսպես կոչված՝ վերնախավային մոտեցումներն իրական քա-

ղաքական կյանքում չեն արդարացնում իրենց։ Քաղաքական գործընթացներում բացառապես քաղաքական վերնախավի դերակատարումը շեշտադրող այդ մոդելները այսօր լուրջ կերպափոխումների առաջ են կանգնած։ Հիմնախնդրի խորքային լինելու ցուցիչներից մեկն էլ կարելի է համարել այն, որ հանրության ընկալումներում կերպափոխման են ենթարկվում իշխանության լեգիտիմության հիմքերը։ Չորս կամ հինգ տարին մեկ տեղի ունեցող ընտրությունները, ըստ էության, ի վիճակի չեն լուծելու իշխանության լեգիտիմության խնդիրը։ Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում ընթացիկ քաղաքական գործունեությունը և ժողովրդավարական ընթացակարգերի գործառության արդյունավետության հանդեպ հանրային պահանջը։ Ինչպես պնդում է ժողովրդավարության արդի նշանավոր տեսաբաններից Պիեռ Ռոզանվալլոնը, լեգիտիմությունը ոչ միայն ռեժիմի իրավական հատկանիշ է, որի հիմքն ընտրություններն են, այլև առաջին հերթին հանրային վստահության ցուցիչ է, որն արտացոլում է լեգիտիմության ոչ միայն բարոյական, այլև ժամանակային չափումը, այսինքն՝ լեգիտիմության շարունակական պահպանման հնարավորությունը[1]։ Մի կողմից վկայակոչելով, որ քաղաքացիները զգալիորեն կորցրել են վստահությունն ընտրական ինստիտուտի հանդեպ, ինչն էլ հանգեցրել է ընտրական մասնակցության նվազման, իսկ մյուս կողմից, նկատի առնելով քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցության ոչ ֆորմալ ձևերը, ինչպիսիք են հակակառավարական ցույցերը, ակցիաներն ու գործադուլները, Ռոզանվալլոնն առաջ է քաշում այն դրույթը, որ իրականում տեղի է ունենում ոչ թե քաղաքացիականության անկում, այլ ավելի շուտ քաղաքացիականության բնույթի փոփոխություն։ Այդ կերպափոխման գործընթացը դրսևորվում է երեք կերպ. 1. արտահայտվելու ժողովրդավարություն, ինչը նշանակում է, որ հանրությունն ունի ձայնի իրավունք, և դա կարող է արտիկուլացվել. հանրությունը կարող է խստորեն քննադատել կառավարության գործողություններն ու ներկայացնել պահանջներ, 2. ներգրավման ժողովրդավարություն, որի պայմաններում մարդիկ միավորվում են՝ կատարելու ընդհանուր բարիքի բավարարմանն ուղղված գործողություններ, 3. միջամտության ժողովրդավարություն, որն էլ ենթադրում է կոլեկտիվ գործողությունների բոլոր ձևերը՝ ցանկալի արդյունքի հասնելու համար[2]։ Վերն ասվածն առնվազն վկայում է, որ արդի փուլում ժողովրդավարական համակարգերի արդյունավետ կենսագործունեության համար անհրաժեշտ պայման պետք է դիտարկել նաև կառավարողների և կառավարվողների միջև հարաբերությունների բնույթի փոփոխության հանգամանքը։ Այն առաջին հերթին ենթադրում է, որ պետք է դիտել հասարա-

[1] Տե՛ս **Rosanvallon P**., Counter-Democracy. Politics in an Age of Distrust: //Cambridge: Cambridge University Press, 2008, էջ 104-121։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 195-214։

կությունը որպես քաղաքական որոշումների ընդունման գործընթացի մասնակից և որոշումների իրականացման նկատմամբ վերահսկողություն կատարող։ Այս համատեքստում կարծում ենք, որ առանցքային նշանակություն ունեցող գործիք պետք է համարել հանրային քաղաքականությունը, քանզի այն միակ ոլորտն է, որտեղ ուրվագծվում են իշխանության և հասարակության փոխհարաբերությունների հիմնական ձևերն ու մեխանիզմները։

Ներկայացուցչականության ինստիտուտի և իշխանության լեգիտիմության առկա ճգնաժամերի պայմաններում հանրային քաղաքականությունը դառնում է իշխանության միակ ռեսուրսը, որը թույլ է տալիս հասարակության հետ ուղղակի աշխատանքի միջոցով ոչ միայն շեշտակիորեն բարձրացնել ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետությունը, այլ նաև լուծել իշխանության լեգիտիմության խնդիրը։ Հատկանշական է, որ հայաստանյան վերջին տարիների փորձը ևս ցույց է տալիս, որ իշխանության և դրանից ածանցյալ քաղաքական ինստիտուտների հանդեպ հանրային բավականին ցածր վստահության պատճառներից մեկը ոչ արդյունավետ մեխանիզմներով իրականացվող հանրային քաղաքականությունն է։ Նվազ թափանցիկ, նվազ հրապարակային և սոցիալական պատասխանատվության ցածր մակարդակի հանրային քաղաքականության վարման արդյունքում քաղաքական որոշումների ընդունման գործընթացում հաճախ կա՛մ չի ապահովվել հանրային լայն մասնակցություն, կա՛մ փորձ է կատարվել ապահովել զուտ նմանակող մասնակցություն։ Ավելին, կարելի է պնդել, որ առանձին դեպքերում հանրային քաղաքականությունն իշխանության կողմից օգտագործվել է որպես հանրային կարծիքը մանիպուլացնելու գործիք, իսկ ընդդիմությունն էլ այն դիտարկել է առավելապես իշխանության հասնելու սեփական նպատակները բավարարելու միջոց։ Տեղ է գտնում նաև այն վտանգավոր գործելակերպը, երբ ոչ թե ինստիտուտներն են որոշում հանրային քաղաքականության դերակատարների գործունեության շրջանակը, այլ հենց դերակատարներն են այդ ինստիտուտները ենթարկում սեփական պահանջմունքներին՝ ըստ էության դուրս թողնելով հանրությանը՝ որպես հանրային քաղաքականության միակ լեգիտիմ շահառուի։ Պատահական չէ, որ 2011-2013 թվականներին միայն Հայաստանում արձանագրվել են ավելի քան երեք տասնյակ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնցից շատերը շարունակվել են նաև հետագայում (Մաշտոցի պուրակի պահպանմանը նվիրված, «Վճարում ենք 100 դրամ», «Դեմ եմ», «Էլեկտրիկ Երևան» և բազմաթիվ այլ քաղաքացիական նախաձեռնություններ)[3]։ Գործնականում այս և այլ դեպքերում քաղաքացիական լայն զանգվածների համախմբումը եղել է հանրային քաղաքականության

[3] Տե՛ս **Gevorgyan V**., **Bagiyan A**., Online versus Offline Activism: The Case of Armenia // Caucasus Research Resource Centers//2015, էջ 7։

սուբյեկտների կողմից ընդունված քաղաքական որոշումների արձագանք, և դա այն դեպքում, երբ այդ որոշումները փաստորեն շոշափել են հանրային լայն, առանձին դեպքերում ամբողջ հանրության («Վճարում ենք 100 դրամ», «Դեմ եմ», «Էլեկտրիկ Երևան») շահերը, սակայն այդ ամենին հանրության առնչությունը եղել է ոչ թե նախագծման ու պլանավորման փուլերում, այլ ավելի ուշ՝ որոշումների իրականացման փուլում: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ինչ-որ առումով այդ որոշումներից շատերը զուրկ են եղել հանրային լեգիտիմության հիմքից: Պատահական չէ, որ հանրային քաղաքականության հիմնահարցը դիտարկելիս միշտ առանցքային կարևորություն են ստանում հենց հանրային մասնակցությունը և հանրության կողմից դրանց աջակցությունը:

Գերմանացի սոցիոլոգ Ն. Լումանը, օրինակ, հանրային քաղաքականությունը սահմանելիս շեշտում է, որ «դասական իրավական դիսկուրսում «հանրայինը» սահմանվում է «բոլորին հասանելիություն» հասկացության միջոցով և նշանակում է հասանելիության նկատմամբ վերահսկողության բացակայություն»[4]: Մ. Ռիտերը պնդում է, որ «հանրային քաղաքականություն» հասկացությունն ի հայտ է եկել լիբերալ ժողովրդավարության տեսության հայեցակարգում և կոչված է առաջ մղելու քաղաքական բանավեճերի, քաղաքացիական միությունների և սեփական շահերը պաշտպանելու մեխանիզմների միջոցով քաղաքական գործընթացին քաղաքացիական մասնակցության գաղափարը[5]: Հանրային քաղաքականության համատեքստում քաղաքական որոշումների ընդունման առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Հ. Ջենկինս-Սմիթի և Սաբատիեի՝ հանրային շահերի միավորման հայեցակարգը (advocacy coalition framework)[6]: Հայեցակարգի կարևորագույն առանձնահատկություն կարելի է համարել պնդումն առ այն, որ փոփոխությունները կամ բարեփոխումները մարդկանց համատեղ գործողությունների արդյունք են, որի մի կողմում օրենսդիր և գործադիր ճյուղերի ներկայացուցիչներն են, իսկ մյուս կողմում՝ «հանրային շահերի պաշտպանությամբ հանդես եկող խմբերը»: Ուստի Ա. Սունգուրովը գտնում է, որ բարեփոխումների անհաջող իրականացումը կամ դրանց ցածր արդյունավետությունը հաճախ պայմանավորված է քաղաքական որոշումների նախագծման և ընդունման գործընթացում քաղաքացիական հասարակության և փորձագիտական հանրույթի ցածր մասնակցությամբ[7]: Հանրային լայն զանգվածների և փորձագի-

---

[4] **Гадышев С. А.** Современные подходы к определению публичной политики // "Гуманитарный вектор", 2010, № 3 (27), с. 132.

[5] Տե՛ս **Беляева Н. Ю.** Публичная политика в России: сопротивление среды // "Политические исследования", 2007, № 1, էջ 30:

[6] Տե՛ս **Сабатье П.**, **Дженкинс-Смит Х**. Концепция лобби-коалиций: оценка // Публичная политика: от теории к практике. СПб., 2008, էջ 94–154:

[7] Տե՛ս **Сунгуров А. Ю**. Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы. М.: 2015, էջ 145-160:

տական հանրույթի մասնակցության կարևորությունը շեշտող մեկ այլ հայեցակարգ է Դեյվիդ Գաստոնի մշակած և հետագայում վարչարարական քաղաքականության մասնագետ, հոլանդացի գիտնական Ռոբերտ Հոպի զարգացրած «սահմանային կառուցվածքների» (boundary structure) հայեցակարգը[8]: Այն բազմամակարդակ սխեմայի միջոցով ցույց է տալիս, որ միկրոմակարդակում միշտ անհրաժեշտ է իրականացնել կառավարչական որոշումների և կոնկրետ նախագծերի շուրջ խորհրդակցություններ: Մեզոմակարդակում արդեն կարևորվում է քաղաքական ցանցերի և խնդիրների տիպաբանությունը, իսկ մակրոմակարդակում այդ ամենը զուգակցվում է քաղաքացիական մշակույթի բնույթի հետ: Հանրային քաղաքականության համատեքստում արդյունավետ կառավարում իրականացնելու առումով մեծ կարևորություն է ստանում նաև քաղաքագետ Սմորգունովի մոտեցումը, համաձայն որի՝ «քաղաքական աշխատանքը (policy work) ենթադրում է ավելի լայն համատեքստ ու պրակտիկաներ, քան ռացիոնալ առևտուրն ու ռեսուրսների պարզ փոխանակումն է: Այս առումով հանրային քաղաքականության կառավարումը նշանակում է «ոչ միայն կառուցվածքային փոխատեղումներ, այլ նաև գործընթացային և օպերատիվ փոփոխություններ՝ հիմնված հրապարակայնության, բանավեճի և անկեղծության սկզբունքների վրա, որոնց կենտրոնում էլ համագործակցության և համակարգման խնդիրներն են»[9]: Վերը բերված սահմանումներն ուղղակիորեն ցույց են տալիս քաղաքացիական մշակույթի և հանրային քաղաքականության կապն այն առումով, որ որպես քաղաքացիական մշակույթի գործիք՝ արդյունավետ հանրային քաղաքականությունը թույլ է տալիս ապահովել քաղաքացիական մշակույթի այնպիսի կարևոր բաղադրիչների գործառությունը, ինչպիսիք են քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահությունը, թափանցիկ կառավարումը և հանրության սուբյեկտայնությունը բոլոր այն քաղաքական որոշումներում, որոնք ուղղակիորեն առնչվում են հանրության լայն շերտերի շահերին: Այս համատեքստում ինչպես արևմտյան ժողովրդավարությունների վերջին տարիների, այնպես էլ հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ հանրային քաղաքականությունը կերպափոխումների կարիք ունի, և որպես արդյունավետ լուծման տարբերակ կարող է հանդես գալ ժողովրդավարության դելիբերատիվ (խորհրդակցական) մոդելը: Դելիբերացիայի գործընթացն ինքնին ենթադրում է քաղաքական որոշումների ընդունման գործընթացում հանրության դերակատարման բարձրացում, արդյունավետ ու թափանցիկ հանրային քաղաքա-

---

[8] Տե՛ս **Hoppe R, Wesselink A., Cairns R.,** Lost in the problem: the role of boundary organizations in the governance of climate change//Wiley Interdisciplinary Reviews: Climate Change. 2013, Vol. 4. № 4, էջ. 283–300:

[9] **Сморгунов. Л. В.** Управление публичной политикой: становление научной дисциплины // "Управление публичной политикой". Коллективная монография. М., 2015, с. 10-18.

կանություն վարելու համար իշխանություն-հասարակություն համաչափ հաղորդակցության բաց մոդելների ու պրակտիկաների կիրառում: Պատահական չէ, որ ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Բեսսետը դելիբերատիվ ժողովրդավարությունը սահմանում է որպես «քաղաքացիների հետ հաղորդակցված և հիմնավորված որոշումների միջոցով իրականացվող կառավարում», իսկ բուն դելիբերացիայի գործընթացը որպես «պետական քաղաքականության ըստ էության քննարկում»[10]: Դելիբերատիվ գործընթացի անմիջական նպատակն է՝ հանրային բարիքի սահմանումը բոլոր՝ թե՛ ազգային (ազգային անվտանգության հետ կապված), թե՛ տեղական (առանձին մարզի, քաղաքի զարգացման ռազմավարություն) և թե՛ միջազգային (երկրի միջազգային ինտեգրացիոն քաղաքականություն) մակարդակներում: Դելիբերատիվ գործընթացի հիմնական բաղադրատարրերի թվում են տեղեկատվությունը, փաստարկումը և համոզումը[11]: Տեղեկատվությունը ենթադրում է քաղաքական, տնտեսական, սոցիալական կարևորագույն հիմնահարցերի վերաբերյալ փաստեր և քանակական տվյալներ: Այն կիրառվում է քաղաքական աջակիցներին տեղեկություններ տրամադրելու և նրանց շրջանակը հնարավորինս ընդլայնելու, որոշումներ ընդունող անձանց կողմից հանրության լայն շրջանակների հետ հաղորդակցվելու և համատեղ ընտրված քաղաքական կուրսի արդյունավետության և օգտակարության հարցի շուրջ համաձայնության գալու համար: Փաստարկումը ենթադրում է փաստերի համադրում առաջադրված նպատակների հետ, ինչպես օրինակ՝ հնարավորինս նվազագույն միջոցներով հասնել գործող քաղաքական կուրսի էլ ավելի կատարելագործման, իսկ համոզվածությունը դրսևորվում է այն դեպքում, երբ որոշման ընդունման գործընթացի մասնակիցներից մեկը սկսում է կամավոր ընդունել այն դիրքորոշումը, որը մինչ այդ չէր կիսում :

Դելիբերատիվ ժողովրդավարության հայեցակարգին առավել համակարգված անդրադարձ են կատարել Ջ. Դյուին, Յ. Հաբերմասը, Ջ. Կոենը, Ս. Բենհաբիբը, Շ. Մուֆը և այլք: Ջ. Դյուին մեծամասնության կողմից իշխանության իրականացման գործընթացում դելիբերատիվ ժողովրդավարության տեսանկյունից շեշտադրում է հասարակական քննարկումների կարևորությունը, որոնց շնորհիվ քաղաքացիներին հաջողվում է քաղաքական նշանակության լայն շրջանակի հարցերի շուրջ համաձայնության գալ[12]: Ընդունելով այն հանգամանքը, որ ժողովրդավարության ընթացակարգային բնորոշիչ են համարվում ընտրական գործընթացը և մեծամասնության կանոնը, այդուհանդերձ, ըստ

---

[10] **Бессет Дж. М**. Тихий голос разума. Делиберативная демократия и американская система государственной власти. М., 2011, с. 5-15.

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 80:

[12] Տե՛ս **Александровна П., Б.** Делиберативная демократия как вариант преодоления кризиса демократических институтов // Издательство «Грамота», УДК 32.019.51, № 8 (58) 2015, часть 2, էջ 55:

հեղինակի, այս սկզբունքների հիմքում ընկած է քաղաքացիների իրավունքը՝ ձևավորել և արտահայտել սեփական համոզմունքները, ինչպես նաև բոլոր մյուս քաղաքացիներին դիտել որպես անհատներ ու իրեն հավասարներ, «որի ուժով էլ հանրության որոշիչ կամարտահայտությունը համարվում է մեծամասնության կողմից արտահայտված գաղափարների ամբողջություն»[13]: Գերմանացի փիլիսոփա Յուրգեն Հաբերմասի դիտարկմամբ՝ արդի հասարակության յուրահատկությունն այն է, որ էականորեն փոխվում են «ժողովրդավարություն» հասկացության նկատմամբ պահանջները, և այն այժմ կարող է դրսևորվել «լիազորությունների բաշխման» նոր կարգով, որը վերաբերում է ոչ միայն պետական քաղաքականություն իրականացնող սուբյեկտներին, այլ նաև հասարակության ինտեգրացիան ապահովող տարբեր աղբյուրներին, ինչպիսիք են, օրինակ, համակարգայինը՝ հիմնված գործիքային ռացիոնալության վրա, և սոցիալականը՝ հիմնված հաղորդակցական ռացիոնալության վրա[14]: Ըստ Հաբերմասի, դելիբերատիվ գործընթացի հիմքում պետք է լինեն ոչ թե նորմերի վերաբերյալ բարոյական գիտակցության անհատական ռեֆլեքսիան՝ որպես սոցիալական հարաբերությունները կարգավորող, այլ հանրային դիալոգն ու դիսկուրսը, որոնք ի հայտ են գալիս իրական պատմական ժամանակահատվածում հանրային տարածքներում և կոչված են ձևավորելու սկզբունքային նշանակության հարցերի, այդ թվում՝ նաև սահմանադրական կարգի շուրջ հանրային կարծիք[15]: Հաբերմասը մեծապես կարևորում է նաև դելիբերատիվ քաղաքականության կիրառական նշանակությունը, որը տեսանելի է դառնում այն դեպքերում, երբ հաշվի են առնվում բոլոր հնարավոր հաղորդակցական մեխանիզմները: Վերջիններիս միջոցով էլ, ըստ Հաբերմասի, համընդհանուր կամքը ձևավորվում է ոչ միայն զուտ էթիկապես փոխադարձ ճանաչման հիման վրա, այլ շահերի հավասարակշռման և համաձայնության գալու միջոցով: Դելիբերացիան այս առումով դառնում է այն գործիքը, որը միավորում է երկխոսութային և գործիքակազմային քաղաքականությունները՝ ենթադրելով ռացիոնալ արդյունքներ, որքանով այն իրականացվում է հենց դելիբերատիվ մոդուսով[16]:

Ջոշուա Կոենի դիտարկմամբ ժողովրդավարության դելիբերատիվ մոդելը գործող և անկախ միավորում է, որի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հենց իրենց հիմնադրած պլյուրալիստական ինստիտուտների միջոցով, որտեղ դելիբերատիվ գործընթացը

---

[13] Նույն տեղում, էջ 55:

[14] Տե՛ս **Золотарева Е. В.** Концептуальные основы делиберативной демократии // "Вестник РУДН", серия Политология, 2013, № 1, էջ 86:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 88:

[16] Տե՛ս **Косенко Д, В.** Делиберативная политика в теории коммуникативного действия Юргена Хабермаса // "Теория и практика общественного развития", 2013, № 9, էջ 256:

լեգիտիմության առաջնային աղբյուր է, իսկ ասոցիացիայի անդամներն էլ ճանաչում են միմյանց կարողությունն ու հակվածությունը դիսկուրսի ու դելիբերացիայի հանդեպ[17]: Դելիբերատիվ ժողովրդավարության տեսաբաններից Ս. Բենհաբիբը դելիբերատիվ ժողովրդավարությունը դիտարկում է քաղաքական իշխանության լեգիտիմության համատեքստում: Այս հանգամանքից ելնելով էլ վերջինս ժողովրդավարությունը ներկայացնում է որպես իշխանության հավաքական և հրապարակային մոդել, որն իրականացվում է հասարակության հիմնական ինստիտուտների միջոցով՝ նկատի ունենալով այն սկզբունքը, որ համընդհանուր բարեկեցությանն առնչվող որոշումները պետք է դիտարկել որպես բարոյական նորմերով ու քաղաքականապես միմյանց հավասար մարդկանց կողմից հիմնավորված քննարկումների արդյունք[18]: Բենհաբիբի կարծիքով՝ հասարակական լայն խմբերի մասնակցությամբ ընդունված քաղաքական որոշումները մեծացնում են դրանց լեգիտիմությունը հանրության շրջանում՝ դրանով իսկ նպաստելով նաև ռեժիմի լեգիտիմության աճին: Դելիբերատիվ ժողովրդավարության սկզբունքների իրականացման տեսանկյունից՝ Բենհաբիբը կարևորում է համաչափության և մասնակցության հանգամանքները: Դելիբերացիայի անհրաժեշտությունը հիմնավորելիս հեղինակը հիմք է ընդունում, որ մեկ անձը կամ խումբը, փաստորեն, չի կարող դիտարկել էթիկայի ու քաղաքականության հետ առնչվող հարցերի ծավալուն շրջանակն ու տարբեր մոտեցումները, ուստի ի վիճակի չէ հանգամանալից տիրապետելու տեղեկատվության այն ամբողջ ծավալին, որը բավարար կլինի ռացիոնալ քաղաքական որոշում ընդունելու համար[19]: Այստեղից հետևում է, որ դելիբերատիվ գործընթացը հասարակության մեջ ծնում է բազմակարծություն և այնպիսի պրակտիկաներ, ինչպիսիք են մրցակցային շահերը, մրցակցությունն ու փոխգործակցությունը, համաձայնության փնտրտուքը, փոխազդեցությունը: Վերոնշվածը ցույց է տալիս, որ Բենհաբիբը դելիբերատիվ ժողովրդավարությունը ներկայացնում է որպես ընթացակարգային երևույթ, որքանով այն բոլորին առնչվող հարցերի շուրջ որոշումներ կայացնելու գործընթացում հիմնվում է ինստիտուցիոնալ հստակ ընթացակարգերի ու պրակտիկաների վրա: Այս հիմքով էլ նա հանրային քաղաքականությունը սահմանում է որպես հաղորդակցական ու դելիբերատիվ հիմքերով լեգիտիմացված քաղաքական որոշումների ընդունման տարածություն, որտեղ առկա են ազատ բանավեճ ու հանրային երկխոսություն: Բելգիացի գիտնական Շանթալ Մուֆի հայեցակարգում ևս դելիբերատիվ ժողովրդավա-

---

[17] Տե՛ս **Kohen J.**, Deliberation and Democratic Legitimacy // Contemporary political philosophy: an anthology // Ed. By Goodin R., Petitt Ph. Malden MA, 2006, էջ 159–170:

[18] Տե՛ս **Зайцев А. В.** Делиберативная демократия, диалог и их место в констелляции дискурса публичной политики // "Актуальные проблемы политологии", 2013, № 15 (158), Выпуск 27, էջ 5:

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 6:

ությունը խարսխված է քննարկումների ընթացակարգի վրա, որի միջոցով հնարավոր է հասնել այնպիսի համաձայնության, որը բավարարում է ոչ միայն ռացիոնալության (լիբերալ ազատությունների պաշտպանություն), այլ նաև ժողովրդավարական լեգիտիմության պահանջները[20]:

Դելիբերատիվ հայեցակարգի վերաբերյալ տեսական մոտեցումները ցույց են տալիս, որ եվրոպական և ամերիկյան քաղաքագիտական հանրույթներում շոշափելի է դառնում այսպես կոչված «շրջադարձ դեպի դելիբերացիա-deliberative turn» միտումը: Կարծում ենք՝ կիրառական քաղաքականության տեսանկյունից այս մոդելն արդյունավետ է դիտարկել որպես քաղաքացիական հասարակության և պետության միջև գործուն, անխափան երկխոսություն, որի գործիքակազմը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնելու զարգացման արդի փուլում նկատվող ժողովրդավարական ընթացակարգերի ճգնաժամերը և դրանց անմիջական ցուցիչ հանդիսացող հասարակություն-քաղաքական ինստիտուտներ և հասարակություն-քաղաքական ղեկավարություն փոխհարաբերություններում դրսևորվող անվստահությունը: Այս առումով մեր կողմից դելիբերատիվ մոդելի դիտարկումը հանրային քաղաքականության համատեքստում թերևս պատահական չէ: Խնդիրն այն է, որ դելիբերացիայի գործընթացի վերաբերյալ տեսական անդրադարձերի ճնշող մասն այն քննարկել է որպես զուտ ժողովրդավարության մոդել, մինչդեռ մենք հակված ենք ենթադրելու, որ ավելի արդյունավետ է այն դիտարկել առավելապես հենց հանրային կառավարման, հանրային քաղաքականության, մասնավորապես քաղաքական որոշումների ընդունման գործընթացի համատեքստում՝ որպես դիսկուրսիվ քաղաքականության մոդել: Հետևաբար, Հայաստանում քաղաքական ռեժիմի ժողովրդավարացման համատեքստում հանրային քաղաքականության մեջ դելիբերատիվ տարրերի ներմուծումը կարևոր նախապայման է հասարակություն-քաղաքական ինստիտուտներ փոխադարձ վստահության ամրապնդման համար: Այն առաջին հերթին պետք է ենթադրի իշխանության իրականացման ոչ արդյունավետ, միակողմանի և անհամաչափ հաղորդակցական պրակտիկաներից հրաժարում և անցում ավելի քաղաքացիակենտրոն (citizen centric practices) կամ խոսքակենտրոն (talk centric) պրակտիկաների[21]: Պատահական չէ, որ հանրային քաղաքականության տեսանկյունից դելիբերացիայի խնդիրներն ուսումնասիրողները քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացում առանցքային նշանակություն են տալիս այսպես կոչված պատճառաբանված քննարկումներին (reason based discussions)[22]: Նման գործիքակազմը քաղաքացիներին հնարավո-

---

[20] Տե՛ս **Муфф Ш.** К агонистической модели демократии // "Логос", 2004, № 2. էջ 180–197:

[21] Տե՛ս **Abdulahh N. M., Rahman M. A.,** The Use of Deliberative Democracy in Public Policy Making Process //Public Policy and Administration Research// Vol. 5, № 3, 2015, էջ 221-229:

[22] Տե՛ս **Gastil, J., Black & Lawra. W.,** Public deliberation as the organizing principle of

րություն է տալու ներգրավված լինելու քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացում, լավագույնս ներկայացնելու խնդրո առարկա որոշման վերաբերյալ իրենց դիրքորոշումները և ըստ այդմ՝ առավելագույնի հասցնելու քաղաքականության ակնկալվող արդյունքը (maximize policy outcome): Այլ կերպ ասած՝ հանրային քաղաքականության մեջ դելիբերացիան պետք է ենթադրի *հավասարություն-փոխադարձ շահեր-պատճառաբանված քննարկում-վիճելի նախապատվությունների վերաբերյալ համաձայնություն* սխեմայի արդյունավետ գործառույթն (agreement on disputed preferences)[23]:

Բանալի բառեր - *քաղաքացիական մշակույթ, հանրային քաղաքականություն, քաղաքացիական մասնակցություն, ներկայացուցչական ժողովրդավարություն, դելիբերատիվ ժողովրդավարություն, դիսկուրսիվ քաղաքականություն*

КНЯЗ САРОЯН – ***Общественная политика как инструмент гражданской культуры.*** – Современные типы демократического режима, особенно электоральные демократии с их представительными институтами, сталкиваются с серьёзными проблемами, когда речь идёт о легитимности и общественном доверии. В статье на основе анализа происходящих в Армении внутренних процессов государственная политика рассматривается как эффективный инструмент гражданской культуры в отношениях общественности и политического класса. В этой связи утверждается, что делиберативная демократия и дискурсивная политика стали надёжными инструментами, которые обеспечивают сознательное участие гражданского общества в процессе принятия решений.

Ключевые слова: *гражданская культура, государственная политика, гражданское участие, представительная демократия, делиберативная демократия, дискуссионная политика*

KNYAZ SAROYAN – ***Public Policy as a Tool of Civic Culture.*** – In the article it is highlighted the idea, that modern democratic regime types, especially electoral democracies with their representative institutes are facing serious problems in terms of legitimacy and public trust. From this point of view on the bases of analyses of Armenian domestic political processes, the article suggests considering the public policy as an effective tool of civic culture in the relations of public and policy makers. Consequently, the article argues, that deliberative democracy and discursive politics are believed to be robust instruments insuring deliberative civic engagement in the process of decision making in the Republic of Armenia.

Key words: *civil culture, public policy, civic participation, representative democracy, deliberative democracy, discursive policy*

---

political communication Research // Journal of Public Deliberation 2008, 4 (1), Art. 3:

[23] Տե՛ս **Goodin R. E., Niemeyer S. J.,** When Does Deliberation Begin? Internal Reflection versus Public Discussion in Deliberative Democracy //Political Studies 2003, Volume 51, Issue 4, էջ 627-649: